13 <<Վաղարշապատի Մ. Գորկու անվան N 5 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի ներկայացուցիչ—Կարմեն Ինջիղուլյան

14<<Վաղարշապատի Մ. Խորենացու անվան N 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ—Հասմիկ Մովսիսյան

15 <<Վաղարշապատի Մ. Խորենացու անվան N 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի ներկայացուցիչ—Արմինե Մուրադյան

Խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին մասնակցում էին <<Արմավիր Ռ. Եղոյանի անվան N 1 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն Նունե Դոլինյանը, <<Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան>>ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Ղումաշյանը , <<Մեծամորի Ս. Գալստյանի անվան վարժարան>>ՊՈԱԿ-ի տնօրեն Մարգո Նիկողոսյանը, <<Վաղարշապատի Գր. Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն Ալվարդ Հայրապետյանը , <<Վաղարշապատի Մ. Գորկու անվան N 5 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն Գայանե Սաֆարյանը,<<Վաղարշապատի Մ. Խորենացու անվան N 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Հայկ Բաղդասարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի և քարտուղարի ընտրության հարցը:

2. ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի աշխատակարգի քննարկում և հաստատում:

Լսեցին՝

1.ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի թեկնածու առաջադրվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցիչ Լիլյա Ասատրյանը: Այլ թեկնածություններ չառաջադրվեցին: Տեղում կազմակերպվեց փակ գաղտնի քվեարկություն: Խորհրդի 3 անդամներից կազմվեց հաշվիչ հանձնաժողով: Լուսինե Ալեքսանյանը, հեռավար մասնակցության պատճառով ,չմասնակցեց քվեարկությանը, մնաց ձեռնպահ:

Հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

13— կողմ

2— ձեռնպահ

Որոշեցին՝

ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդինախագահ ընտրվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացուցիչ Լիլյա Ասատրյանը:

Տիկին Ասատրյանը քարտուղարի թեկնածու առաջադրեց Արմինե Սահակյանին, ինչին բոլոր անդամները կողմ քվեարկեցին: